ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 սեպտեմբերի 2017 թվականի N 44-Ա

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 01/15.1/3904-17 գրությունը՝ ***որոշում եմ.***

1.Ալափարսի համայնքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 22-ի «Քաղաքացի Բագրատ Սարգսյանին գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» N 41-Ա որոշման նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 80-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ալափարսի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 7-ի N 21-Ն որոշումը և Ալափարսի համայնքային մրցութային հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 22-ի N 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 6
գ.Ալափարս